

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ



ԳՐԻԳՈՐ ԶՈՒԲԱՐՅԱՆԻ ԱՆՏԻՊ ՀՈՂՎԱԾԸ ՀԱՄԱՆԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ

Մեծ է եղել ականավոր հասարակական գործիչ, իրավագետ և պատմաբան, հրապարակախոս, Հայաստանի գիտության վաստակավոր գործիչ Գրիգոր Համբարձումի Զուբարյանի դերը Խորհրդային Հայաստանի պետական շինարարության և կրթության զարգացման գործում: Բայց նրա գործունեությունը անձանոթ է սերունդներին: Գր. Զուբարյանի կյանքի ուղին եղել է բարդ, հակասական ու դժվարին: Ծնվել է 1888 թ. Նոր Նախիջևանի Թոփթի գյուղում: Ավարտել է Նոր Նախիջևանի թեմական դպրոցը, այնուհետև Յարտալավի համալսարանի իրավաբանական և Մոսկվայի համալսարանի պատմագրական բաժանմունքները: Որպես իրավաբան աշխատել է 1913-1919թթ., ապա ծավալել է հեղափոխական գործունեություն, հրապարակագրական հոդվածներով հանդես է եկել պարբերական մամուլում: Հայաստանի խորհրդայնացումից հետո եղել է հանրապետության արդարադատության ժողովոմի տեղակալ: Իր մասնակցությամբ է կազմվել ՀԽՍՀ առաջին սահմանադրությունը: Մասնակցել է նաև օրենսդրության, հայերեն իրավաբանական եզրույթների մշակմանը, հեղինակակից էր 1924-ին լույս տեսած «Հայ-ռուսերեն իրավաբանական բառարանի»: Նա գործուն մասնակցություն է ցուցաբերել Երևանի համալսարանի վերակառուցման աշխատանքներին, եղել է առաջին դասախոսներից, ընդհատումներով (1921-1937, 1957-1962 թթ.) դասավանդել է հոռմեական իրավունք, պետական իրավունք, խորհրդային սահմանադրություն, ճարտասանական արվեստ և այլ առարկաներ:

Մակայն, չնայած մատուցած ծառայություններին, Գր. Զուբարյանն իր ստեղծագործական ուժերի ծաղկման շրջանը ստիպված էր անցկացնել քարտավայրում, անպտուղ: Չերբակալվել է 1937թ. հուլիսի 14-ին: 1939-ին դատապարտվել է շինծու մեղադրանքով՝ «որպես Դաշնակցություն հակահեղափոխական կուսակցության անդամ»: Թեպետ մեկ տարի անց փոխվել է այդ դատավճիռը, շատ չանցած նորն է կայացվել, որով նա դատապարտվել է ութ տարվա ազատազրկման «ուղղիչ աշխատանքային գաղութում»:

Ժամկետը լրանալուց հետո Գր. Զուբարյանը վերադառնում է հայրենիք՝ առանց Երևանում ապրելու իրավունքի: Հաստատվելով Սպիտակում՝ նա ձեռնամուխ է լինում իր վաղեմի մտահաղացումն իրագործելու աշխատանքին: Դա լինելու էր պատմաքաղաքական-իրավագիտական հիմնարար ուսումնասիրություն՝ «Armenia irredenta. ԽՍՀՄ և միջազգային իրավունք»: Հասկանալի է, որ այսպիսի մի ընդգրկուն ծրագիր իրագործել հնարավոր չէր Սպիտակի անձուկ պայմաններում, մանավանդ գիտնականը բաժանված էր ընտանիքից, որ Երևանում էր:

Այդ օրերին Գր. Զուբարյանին սատար է կանգնում Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Զ Զորեքյանը: Հատուկ ծառայությունների հավաստմամբ «նրա մտերիմ ընկերն» էր Գր. Զուբարյանը՝ 1948 թ. հուլիսին Կաթողիկոսը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահին է առաքում Գր. Զուբարյանի՝ 27 հունիս 1948 թվակիր դիմումը՝ իր միջնորդագրով: «Իմ բազմակողմանի և պատասխանատու՝ ոչ միայն հոգևոր-եկեղեցական բնագավառում, այլ մեր պետության ազգային-քաղաքական որոշակի խնդիրների կատարմանն ուղղված գործունեության ընթացքում ես կցանկանայի օգտվել Գր. Զուբարյանի՝ և՛

¹ Տե՛ս «Վանքագրեր Հայ Եկեղեցու պատմութեան», գիրք Զ, «Գեորգ Զ Զորեքյան Կաթողիկոս Ամենայն Հայոց (1938-1955 թթ.)», կազմեց Ս. Բեհրուդեան, Եր., 1999, էջ 476:

խորհրդային ու արտասահմանյան իրավունքի, և՛ Հայոց պատմության ու եկեղեցական-նական իրավունքի հարուստ գիտելիքներից: Ցավոք, չկա որևէ այլ անձնավորություն ոչ միայն եկեղեցականոնական իրավունքի, նաև հարակից հարցերի մասնագետ, որ փոքր ի շատև տիրապետեր Էջմիածնի Կաթողիկոսարանին հույժ անհրաժեշտ այդ գիտելիքներին»,- գրում էր Վեհափառ Հայրապետը²:

Ի վերջո վերահաստատվելով Երևանում՝ Գր. Չուբարյանը աշխատանքի է անցնում Երևանի պետական համալսարանում: Ըստ երևույթին այդ տարիներին նրան առաջարկվում է գրել համալսարանի նախնական շրջանի պատմությունը, որ ստորև ներկայացնում ենք ընթերցողի ուշադրությանը:

Ձեռագիրը վերնագրված չէ, բաղկացած է 34 թերթից (34 էջ), պահվում է հեղինակի ընտանեկան արխիվում: Հեշտ է նկատել, որ այն գրված է բավական խիստ կուսակցական դիրքերից: Դա հասկանալ կարելի է՝ նկատի առնելով նաև հեղինակի անցած սիբիրյան գողգոթան: Մասնավորապես կտրուկ բացասական վերաբերմունքը «դաշնակցական համալսարանի» նկատմամբ լիովին համապատասխանում էր պաշտոնական տեսակետին, որ հետևյալն էր. «Սեփական համալսարան ունենալու մեր ժողովրդի բաղձանքը իրականացավ միայն մեծ Հոկտեմբերի հաղթանակի և Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման շնորհիվ»³: Այս պնդումը տարբեր այլացումներով կրկնվում էր ամեն պատեհ կամ անպատեհ առիթով: Միակ բացառությունը եղել է ակադ. Մ. Ներսիսյանի նախաձեռնությամբ համալսարանի 50-ամյակին նվիրված գրքում, ուր անտեսված չէ համալսարանի հիմնադրման իրական փաստը⁴:

Գր. Չուբարյանի սույն գրությունը շատ կարևոր վավերագիր է իբրև «առաջին ձեռքից» բխող տեղեկատվություն և հավանաբար ծանոթ է եղել համալսարանի պատմության ուսումնասիրողներին⁵:

Ձեռագիրն ունի որոշ անունների, եզրույթների գրության անհետևողականություն, որ անհրաժեշտ ենք համարել դարձնել միօրինակ: Ն. Մարր, Ա. Մէյն, Իւրիյ գրելաձևերը դարձրել ենք Ն. Մառ, Ա. Մեյն, Յուրի: Համալսարանի առաջին վերատեսուչ-ռեկտորի ազգանունը զրականության մեջ ամենուրեք Ղամբարյան է⁶, Գր. Չուբարյանը գրում է Համբարյան՝ մեկնելով ռուսերեն Գамбарян-ից: Այստեղ անհրաժեշտ չենք համարել միջատությունը:

Ինքնագիրը միահեռ էջակալում չունի, ուստի հնարավոր ենք համարում, որ որոշ էջեր պակաս լինեն: Այս կասկածը ամրապնդվում է նաև այն հանգամանքով, որ հռոյվածի հատվածների համարակալումը հետևողական չէ (օրինակ, երկու հատված ունեն նույն՝ II համարը), որ, սակայն, պահպանել ենք նույնությամբ:

Ա. Գ. ՄԱԳԱՅԱՆ

² Անդ, էջ 448:

³ «Երևանի համալսարան», խմբագրական հանձնաժողով՝ Գր. Ղարիբյան և ուրիշներ, Եր., 1981, էջ 9:

⁴ Տե՛ս «Երևանի պետական համալսարան», խմբագրությամբ Հ. Ի. Աղամյանի և ուրիշների, Եր., 1970, էջ 6:

⁵ Մասնավորաբար այստեղ շոշափվող հարցերի քննությունը տես Լ. Ղարիբջանյան, Երևանի պետական համալսարանը, Բ հրատ., Եր., 1965, էջ 21-28 և այլն: Առաջին դասախոսների մասին կենսագրական տեղեկություններ տես այս գրքում:

⁶ Տե՛ս, օրինակ, «Հայկական համառոտ հանրագիտարան», հատ. 3, Եր., 1999, էջ 464-465:

[ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ՝ ԼԻՆԵԼՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ]

I.

Դաշնակցական կառավարությունը ձեռնարկեց համալսարան հիմնադրելու գործը 1919 թ. գարնանը, միայն, մոտ տարի անց Հայաստանը «անկախ» հայտարարելուց: Նախաձեռնությունը պատկանում էր «հանրային կրթության և արվեստի նախարար» Սիրական Տիգրանյանին: Համալսարանի կազմակերպիչ նշանակվել էր Պետրոգրադի համալսարանի և միաժամանակ Պոլիտեխնիկ ինստիտուտի պրոֆեսոր Յուրի Համբարովը, իսկ նրա օգնական՝ քիմիկոս Դավիդ Չավրիևը: Юрий Степанович Гамбаровը ականավոր իրավագետ էր, մասնագետ հռոմեական իրավունքի և ընդհանուր քաղաքական իրավունքի: Ժամանակին «ձախի» համբավ ուներ և որպես այդպիսին ցարական կառավարության կողմից հեռացվել էր Մոսկվայի համալսարանից Մ. Մ. Կովալևսկու, Ս. Ա. Մուրոմցովի, Ս. Պոսնիկովի հետ: Հետագային Մ. Կովալևսկու, դը Ռոբերտիի, Թամաշևի հետ հիմնադրել էր Փարիզում «Ռուսական ազատ բարձրագույն դպրոցը», որտեղ «Ազրային հարցի» մասին էպիզոդիկ կուրս դասախոսել էր նաև Վ. Ի. Լենինը: 1905 թ. ռեյուցիայից հետո վերադարձել էր Պետերբուրգ և համակիր էր Մ. Կովալևսկու, Կ. Կ. Արսենևի, Ս. Պոսնիկովի գլխավորած «դեմոկրատիկ ռեֆորմների պարտիային»: Բացի պրոֆեսորությունից Համբարովը միաժամանակ խմբագիրներիցն էր Гранит “Г”-ի հայտնի “Энциклопедический словарь”ի, որին նույնպես աշխատակցում էր Վլադիմիր Իլյիչը: Հոկտեմբերյան ռեյուցիայից հետո նա եկել էր իր ծննդավայր Թիֆլիզը, որտեղ և դասախոսում էր նորաբաց Պոլիտեխնիկումում: Թեև անվանի գիտնական էր, բայց արդեն հիվանդ ծերունի էր, կաբինետի մարդ, հեռու հայ իրականությունից, ինքն էլ ռուսախոս:

Համբարովի օգնականը՝ Դավիթ Չավրիևը Պետերբուրգի պոլիտեխնիկ ինստիտուտի դոցենտ էր, մասնագիտությամբ քիմիկոս-ֆիզիկոս, սոցիալական ծագմամբ սա, ինչպես և Համբարովը՝ ազնվական էր, նույնպես քիֆիզեցի: Դավիթ Չավրիևը եղբայրն էր հայտնի դաշնակցական բժիշկ Հակոբ Չավրիևի և որպես այդպիսին դեռ Պետերբուրգից մոտ էր կանգնած հայ ազգային-բուրժուական գործիչներին, որի շնորհիվ պատասխանատվության կանչվեց և դատվեց 1912 թ. սենատում որպես դաշնակցության ղեկավար գործիչ, թեև այդպիսին չէր: Չավրիևը ևս դասախոս էր և բացի քաղաքական գործիչների հետ ունեցած ծանոթություններից՝ նա անծանոթ էր հայ ժողովուրդին ու նրա կուլտուրային:

Համալսարանի կազմակերպության հանձնաժողովում աշխատում էին նաև քիֆիզաբնակ Մենտոր Բունիաթյանը՝ տնտեսագետ և Նուխվա մետաքսի արդյունաբերության գործարանատեր-կապիտալիստ, իր քաղաքական հայացքով բուրժուական լիբերալ և ոխերիմ թշնամի սովետական իշխանության:

Այդ հանձնաժողովում մասնակցում էին նաև Էջմիածնի միաբան Մեսրոբ եպիսկոպոսը, մշակական ու կաղետական՝ հայ ժողովրդական պարտիայի համակիր:

Հանձնաժողովի անդամ ու քարտուղար, Էջմիածնի ճեմարանի երկարամյա ուսուցիչ, անդամ հայ «ժողովրդական պարտիայի», Կենտրոնական Կոմիտեի անդամ [չի նշում անունը]:

Այս հանձնաժողովը Հայաստանում չէր աշխատում ու գտնվում էր Թիֆլիզում:

Հանձնաժողովի համալսարանի կանոնադրությունը մշակելիս հիմք էր ունե-

ցել ռուսական նախասովետական համալսարանների կանոնադրությունը:

Դասախոսներ հրավիրվել էին՝ Համբարովը հոովմենական և քաղաքացիական իրավունք, Չավրիևը՝ քիմիա, Մետրոպ եպիսկոպոսը՝ Հայոց պատմություն, Գարեգին եպիսկոպոս՝ Հայ եկեղեցու պատմություն, Միրեկան Տիգրանյան՝ հայ իրավունքի պատմություն և հոգեբանություն, Հակոբ Մանանդյան՝ հայոց պատմություն. քաղաքական համոզմունքով մացիոնալ-լիբերալ, Գրիգոր Ղափանցյան՝ համեմատական լեզվաբանություն, քաղաքական համոզմունքով հետադեմ-մացիոնալիստ, Արսեն Տերտերյան՝ հայ գրականության պատմություն. քաղաքական համոզմունքով նախկին դաշնակցական և ապա՝ աջ էս-էո և վերջը անկուսակցական, աշխարհայացքով սկզբունքով էլեկտիկ-«ֆակտորների» թեորիային հետևող:

Ռուս գիտնականներից հրավիրվել էին՝

ա. Ա. Ա. Մանույլով (Мануйлов) – քաղաքատնտեսություն, Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր և 1906-1911 թթ. ռեկտոր և Լվով-Կերենսկու ժամանակավոր կառավարության լուսավորության մինիստր, կաղետական պարտիայի կենտրոնական կոմիտեի անդամ և ցարական Ռուսաստանի պետական սովետի անդամ՝ ընտրված ակադեմիական կուրիայից: 1922 թ. հրավիրվեց ՌՄՖՍՌ-ի, հետագային ՄՍՌՄ Պետական բանկի վարչության անդամ և ակտիվ մասնակից սովետական դրամական ռեֆորմի:

բ. Սավիչ-Չաբլոցկի (Савич-Заблоцкий) – գեոլոգ, մալ ֆիզիկոս. Խարկովի համալսարանի նախկին պրոֆեսոր, անպարտիական, սակայն իր համոզմունքներով շատ չափավոր ուկրաինական մացիոնալ-լիբերալ: Ինչպես դաշնակցական համալսարանը հրավիրված բոլոր պրոֆեսորները, Սավիչ-Չաբլոցկին ևս հակասովետական գիտնական էր:

Հրավիրվածների շարքումն էին մալ Ստեփան Կանայանը, Ստեփան Մալխասյանը («ժողովրդական»-մշակական), Մանուկ Աբեղյանը՝ նոր-դարական մացիոնալիստ՝ Գրիգոր Չալխուշյանի գլխավորած օրեպակաս «անպարտիականների պարտիայի» նախաձեռնող խմբակի անդամ, այլ և՛ Աշխարիբեգ Լոռու-Մելիք-Քալանթարյանը՝ հնագիտություն, անպարտիական, բայց համակիր դաշնակցության: Հրավիրվել էր մալ՝ վերոհիշյալ բուրժուա-հակամարքսիստ Մենտոր Բունյաթյանը:

Հանձնաժողովը որոշում էր կայացրել հրավիրել մալ Պետրոգրադից Ն. Մառին, Բեռլինից՝ հայագետ Մարքվարտին, Փարիզից՝ Մելեին, սակայն ժամանակի հաղորդակցության դժվարությունների պայմաններում՝ այդ որոշման կատարումը առկայվում էր մինչև 1920 թ. ամառ, երբ համալսարանի բացվելուց հետո ստացվել էր Մառի և Մարքվարտի համաձայնությունը:

Այսպես էր դաշնակցական համալսարանի դասախոսական կազմի գիտական և սոցիալ-քաղաքական դիմագիծը:

Որքան հիշում եմ, հրավիրվել էին մալ Ալեքսանդր Թամանյանը, որ պաշտոնավարում էր դաշնակցական կառավարության խնամատարության մինիստրության շինարարական գլխավոր վարչության պետի պաշտոնում 1919 թ. աշնանից, այլ և ճարտարապետ Թորոս Թորոմանյանը:

Համալսարանի կազմակերպության հեղինակ, իսկ հետագային՝ 1919 թ. աշնանից պարլամենտի փոխնախագահ Միրական Տիգրանյանի նախաձեռնությամբ հրավիրվեցի մալ ես՝ դասախոսելու պետական իրավունքը: Ես տվեցի համաձայնությունս, սակայն պարտադիր պայման տալով, որ դասախոսելու եմ իմ կազմած ծրագրով, որը մերժվեց այն պատճառաբանությամբ, որ հիմնական-մեծ տեղ ծրագրում հատկացված է սովետական կոնստիտուցիային և որ ծրագիրը

կազմված է «մարքսիստական բոլշևիկյան տենդենցներով»: Առաջին պատճառաբանությունը ճիշտ էր, բայց թերամտություն էր երկրորդ պատճառաբանությունը, որովհետև ես այն ժամանակ պաշտպանում էի ոչ թե պրոլետարիատի, այլ պրոլետարիատի ու աշխատավոր գյուղացիության դիկտատուրան և սոցիալիստական – ռևոլյուցիոն պարտիաների հեգեմոնիայի տեսակետը (բոլշևիկների, էս-էռների և մենշևիկ-ինտերնացիոնալիստների միասնությամբ):

II.

Ահա այսպիսի սոցիալ-քաղաքական դիմազիծ ուներ համալսարանի դասախոսական կազմը՝ դաշնակցական համալսարանի բացման պահին:

Շենքի և բնակարանների բացակայության պատճառաբանությամբ համալսարանը հիմնվում էր ոչ թե մայրաքաղաքում, այլ Ալեքսանդրապոլում:

Դաշնակցական համալսարանի բացումը նշանակվել էր 1920 հունվարի 31-ին և կատարվել անօրինակ հանդիսավորությամբ:

Երևանից գնացել էր վարչապետ Ալեքսանդր Իվանովիչ Խատիսովի գլխավորությամբ ամբողջ կառավարությունը, բացի ներքին գործոց և արդարադատության մինիստր Աբրահամ Իսաակովիչ Գյուլխանդանյանից, որը մնացել էր քաղաքական հատուկ հանձնարարություն կատարելու:

Կառավարության հետ մեկնում են պարլամենտի անդամները և քաղաքական պարտիաների ղեկավարները:

Նախընթաց օրը Երևան էր ժամանել անգլիական կառավարության ռազմաքաղաքական կոմիսար գեներալ Ուորտոնը և ունեցել կառավարության հետ գաղտնի քաղաքական խոսակցություն, որի նյութն էր եղել լիկվիդացնել բոլշևիկյան ղեկավար գործիչներին: Հետևյալ օրը Երևանում կայացել էր միտինգ ի պատիվ Ուորտոնի, որը միտինգում ելույթ էր ունեցել և ողջունել ու հայտնել իր գոհունակությունը, որ անգլիական արտաքին գործոց մինիստր լորդ Կերզոն Քետլստոնի առաջարկությամբ ճանաչվել է de facto Հայաստանի կառավարությունը և վստահություն արտահայտել, որ հայ ժողովուրդը և իր «ժարագատ» կառավարությունը կպաշտպանի իր հայրենիքի «անկախությունը» արտաքին և ներքին «թշնամիներից»: Արտաքին «թշնամին» սովետական Ռուսաստանն էր, որի հաղթական Կարմիր բանակը արշավում էր դեպի Կովկասյան լեռները, իսկ ներքին «թշնամին» հայ բոլշևիկներն էին, որոնք մի քանի օր առաջ բանաձևել էին պարտիական կոնֆերանսում դաշնակցական կառավարությունը տապալելու որոշումը:

Ահա այս Ուորտոնը էլ իր շքախմբով գնում էր Ալեքսանդրապոլ իր ներկայությամբ և իր կառավարության անունից «պատվելու» և շնորհավորելու դաշնակցական համալսարանի բացումը:

Կառավարական «սալոն-վագոնով» մեկնում են ամերիկյան բարձր կոմիսար գնդապետ Հասկելը իր կնոջով ու շքախմբով, ֆրանսիական ռազմաքաղաքական հետախուզության պետ կապիտան Պուատեպարը, Պարսկաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Ասատուլյա խանը, մուսավատական Ադրբեյջանի դիվանագիտական ներկայացուցիչ Ախվերդովը, այլ և՛ Դենիկինի զինվորական ներկայացուցիչ և հայկական դիվիզիայի նախկին շտաբի պետ գնդապետ Չենկևիչը:

Հանդիսավոր բացումը տեղի է ունենում Ալեքսանդրապոլի առևտրական դպրոցի շենքում, դպրոցի դիրեկտորը Լևոն Սարգսյանն էր՝ երբեմնի ականավոր դաշնակցական, մուրճ-մշակական, ապա բերնշքայնական, «անկախ սոցիալիստ» և ի վերջո անանունա-իշխանյանական:

Հանդեսը սկսվում է համալսարանի կազմակերպիչ պրոֆ. Յուրի Համբարումի

բացման խոսքով: Ողջույնի ճառերով հանդես են գալիս Ուորտոնպը, Հասկելը և Պուատեպարը՝ մեկը մյուսից ավելի հավաստիացմամբ ու խոստումով երջանկացնելու հայ ժողովուրդին և «ազատ ու անկախ» Հայաստանը:

Քաղաքական-ծրագրային մեծ ճառով հանդես է գալիս նաև հանրային կրթության և արվեստի նախարարը՝ դաշնակցական Ռսկեբերան Նիկոլ Աղբալյանը: Աղբալյանը բացառիկ անկեղծությամբ բացահայտում է նորաստեղծ համալսարանի սոցիալ-քաղաքական ֆունկցիան. «Այն ջահը, որ մենք վառում ենք Հայաստանի բարձրավանդակի վրա՝ չի հանգչի և կլուսավորի առաջավոր Ասիան»: «Ex urienta lux»՝ ասում է կուլտուրայի պատմությունը և տիեզերական բնական օրենքը: Սակայն Աղբալյանը կոչ է անում կապվել կապիտալիստական Արևմուտքի հետ: «Արևմուտքի հետ կապվելու ենք ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական ու գիտական իմաստով» և ապա ավելացնում՝ «Մենք պետք է արտադրենք հում նյութ, թող Եվրոպան մշակի: Եվ քանի շուկա լինենք հում նյութի, միշտ կլինենք քաղաքակիրթ պետությունների հետ և այդ իսկ պատիվ է մեզ: Եթե մենք կարողանանք այդ մեծ քաղաքակրթության մի փոքրիկ մուրճ խփել, այդ իսկ պատիվ է մեզ: Եվ այդ հիմնարկությունը հաստատելով մենք հիմնում ենք մի աշխատանոց, ուր մեր միտքը պիտի աշխատակցի եվրոպական մտքի ղեկավարությամբ»:

Ն. Աղբալյանի արդիական քաղաքական դեկլարացիայից հետո պոռֆեսոր Մեսրոպ եպիսկոպոսը արտասանում է անդրանիկ ակադեմիական ճառը, որն իր հերթին նույնպես դեկլարացիա էր՝ պատմագրական-իդեոլոգիական ասպեկտով: Թեման էր՝ «Հայ վանքերի նշանակությունը Հայաստանի կուլտուրական գործերում»:

Դաշնակցական մաուզերը և վանականի խաչը զինակցում էին՝ գաղության ստրկության և կղերական օրսկուրանտիզմի դատապարտելու հայ ժողովուրդը, խոստանալով կանթեդալույս «անշեջ» ջահով անգամ առաջավոր Ասիան լուսավորելու և երջանկացնելու:

Ստրկությունը պատիվ համարող ծառաները և այդ պատիվը ավետող շնորհատու տերերը ամրապնդում են ավանդական «սրբազան համերաշխության դաշինքը»:

Հայաստանը «անկախացնող» և հայ ժողովուրդը «զուսավորող» ինքնագով և ինքնաբավական մեղոնեկամատորները լուկուլտյան բանկետներով ու պարահանդեսներով են հավերժացնում Հայաստանի համալսարանի հանդիսավոր բացումը: Առատության մեծ աղբյուրից անվերջ հոսում է բիբլիավանդ Նոյ նահապետի տնկած այգիների կարմիր գինին:

Իսկ երկու քայլ հեռու՝ Պոլիգոն կոչված սպանդանոցի անհամբույր-ցրտաշունչ անկյուններին անխնամ ընկած մահվան ճիրաններում գալարվում են այդ իսկ տերերի ու ծառաների ոճրագործ մեղսակցության հազարավոր զոհեր... Անմխիթար մայրերը աղի արցունք են թափում տաճկական ենիչերիների յաթաղանից հրաշքով փրկված՝ իրենց անմեղ զավակների դիակների վրա, իսկ առժամյա դեռ կենդանի որբերը դիակնացած մայրերի անկաթ ստիմքներն էին ծծում անհույս:

Ժամտախտի ժամին... խրախճանքներ էին սարքում Հայաստանի և առաջավոր Ասիայի նորակոչ «զուսավորիչները»:

Փույթ չէ, որ պոլիգոնների մեռելներն անթաղ են վաղուց, ի՞նչ փույթ, քանի որ «ազատ ու անկախ ազգապետությունը» զոհաբերություն է պահանջում... Вальс-ում են հիասքանչ զույգերը՝ գոռոզն Ալբիոնի առաքյալ Ուորտոնպը վարչապետի

⁷ «Արևելքից է լույսը»:

⁸ «Յառաջ», 1920, փետրվարի 5, № 26:

նագելի կողակից Քսենյա Իվանովնայի հետ, երբեմնի կոմեդիանտ, իսկ այն օրերին արդեն մայրաքաղաքի կոմեդիանտ Արշոն՝ անդրօվկիանոսյան ազնիվ տիրուհի Հասկելի հետ: Մահացությունը կենցաղային երևույթ է և միակ առատ բերքն է «միացյալ ու անկախ Հայաստան»-ում: Վերջապես միայն Գյումրին չէ հարուստ այդ բերքով: Այդ իսկ օրերին դաշնակցության Արևելյան բյուրոյի լեյբօրգան «Յանաջ»-ը ավետել էր, որ մի օրում 65 անթաղ դիակ են հավաքել Երևանի փողոցներում...

Տերերն ու ծառաները վերադառնում են մայրաքաղաք: Կայարանում պատվավոր եկվորներին դիմավորում [է] խրախճանքներին միակ անմասնակիցը՝ ներքին գործոց և արդարադատության մինիստր Աբրահամ Գյուլխանդանյանը՝ Արևմուտքին հավատարիմ լինելիության իրական երաշխիքով: Այն իսկ ժամին, երբ Ալեքսանդրոպոլում հանդիսավոր երդում էին տալիս արևմտահայատակության՝ ճիշտ այն ժամին Գյուլխանդանյանը «ոեզերվ միլիցիային» հրամանագրել էր կալանավորել «ներքին թշնամի» Սարգիս Կասյանին, Ասքանազ Մոավյանին և կոմունիստական պարտիայի բազմաթիվ այլ գործիչների:

Ուորտրոպ-հասկելների պատվերը կատարվել էր:

Այսպիսի հանդիսավորությամբ էր բացվել դաշնակցական Հայաստանի պետական համալսարանը: Այսպիսի «անմար» ջահ էին վառել ... մի ժամվա խալիֆները:

II.

ՍՈՎԵՏԱՀԱՅ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ԵՎ ՆՐԱ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԲԱՅՈՒՄԸ

Ա. Երևանի համալսարանի վերակազմական հանձնաժողովի աշխատանքները

Հայաստանում սովետական իշխանությունը հաստատվելու առաջին իսկ օրերից Արմենկոնը մտահոգված էր կուլտուրական ուղյուղիայի հիմնական խնդիրներով, որոնց շարքում նաև նոր մասնագիտական կադրեր պատրաստելու հարցով: Լուսավորության ժողովրդական կոմիսար Ա. Հովհաննիսյանը 1920 թ. դեկտեմբերի 17-ին արձակեց հրաման «Երևանի համալսարանի վերակազմության մասին»: Հին դաշնակցական համալսարանը արդեն անվանվում էր Երևանի կամ ավելի շուտ՝ Հայաստանի համալսարան:

Լուսժողկոմատի այս հրամանով է սկզբնավորվում Սովետական Հայաստանի բարձրագույն կրթության կազմակերպության մեծագործությունը:

Համաձայն դեկտեմբերի 17-ի հրամանի նախկին համալսարանը չէր վերացվում, այլ «վերակազմվում էր և վերակոչվում էր Երևանի ժողովրդական համալսարան»:

Սակայն իրականում դաշնակցական համալսարանը ոչ թե վերակազմվում էր սոսկ, այլ հիմնադրվում էր բոլորովին նոր տիպի բարձրագույն դպրոց:

Նույն այդ հրամանով նախկին համալսարանի ֆակուլտետները փակվում էին և փոխարենը հիմնվում էր երկու բաժանմունք՝ բնագիտական և հասարակագիտական:

Դաշնակցական համալսարանի բոլոր պրոֆեսորները, դոցենտները, պրիվատ-դոցենտները և ասիստենտները համարվում էին արձակված, իսկ համալսարանի գույքի ամբողջ պատասխանատվությունը ընկնում էր հին վարչության վրա:

Լուսավորության ժողովրդական կոմիսարիատին կից կազմակերպվել էր «Համալսարանի վերակազմության հանձնաժողով», որին պարտավորեցված էր մի շարքավա ընթացքում ժողովմաստի հաստատության ներկայացնել «Նոր համալսարանի կազմակերպության հիմունքները, ծրագիրը, դասախոսական կազմը ու շտատները»:

Հանձնաժողովի կազմն էր՝ Կողբետյան, Գրիգոր Չուբարյան և Գագիկ Պիճիկյան: Ես և Պիճիկյանը այնքան ծանրաբեռնված էինք պատասխանատու դեկավար աշխատանքներով, ուստի և խնդրում էինք մեր երկուսիս ևս ազատել հանձնաժողովի վարչական-տեխնիկական հոգսերից, ուստի և ընկ. Հովհաննիսյանը նախագահ նշանակեց Կողբետյանին, որի առավելությունը այն էր, որ նրան չէինք ճանաչում, քաղաքական անցյալ չուներ, երիտասարդ էր՝ վազող-վազվող և միաժամանակ մասնագետ-մաթեմատիկոսի համբավ ուներ: Մեր աշխատանքների և մասնավոր գրույցների ընթացքում պարզվեց, որ Կողբետյանը ռուստովցի հայրենակից էր, հարուստ ընտանիքից և իր համոզմունքներով էլ հակախորհրդային տիպար, սակայն շարժուն, գործնական, ակտիվ և գուցե իրավա-ցիտրեն ընդունակ մաթեմատիկ: Սակայն Հայաստանում ոչնչով չարտահայտեց իր գիտությունը: Շատ շուտով մա սկսեց գաղտուկ ուրիշ աշխատանքներ վերցնել և որ ամենագլխավորն էր՝ ամեն ինչ անում էր մի կերպ արտասահման անցնելու: Այսպիսին էր հանձնաժողովի նախագահը:

Հրամանի համաձայն հանձնաժողովի կազմում լինելու էին նաև ուսանողության երկու ներկայացուցիչներ, որոնք չներկայացան և չմասնակցեցին: Սակայն որպես ուսանողացուներ՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու համար պարտիական գծով նշանակվել էին երկու երիտասարդ-ակտիվ կոմունիստներ՝ Եղիա Չուբար և Վահան Շահգեղյան, որոնք հետագային պետք է մասնակցեին նաև համալսարանի խորհրդում: Վահան Շահգեղյանը ներկա եղավ միայն մի նիստի, այն էլ՝ ուշ եկավ և շուտ հեռացավ, իսկ Եղիա Չուբարը բոլորովին չմասնակցեց հանձնաժողովի որևէ մի նիստի, լինելով ծանրաբեռնված «Ռոստա»-յում և ՀԿՊ կենտկոմի և Արմէկոմի պաշտոնական օրգանի՝ «Կոմունիստ»-ի խմբագրատանը:

Առաջին իսկ նիստից սկսվեց[ին] հանձնաժողովի մեջ հիմնական տարաձայնություններ: Ես այն կարծիքին էի, որ մենք նոր համալսարան ենք հիմնում, իսկ Կողբետյանը, հիմնականում նաև Պիճիկյանը՝ կանգնած էին այն տեսակետների վրա, որ լուսժողովմաստի հրամանի վերտառությամբ արդեն հինը վերակազմում ենք և ոչ թե հինը քանդում ու նորը սկսում: Այս տարաձայնությունների արդյունքն եղավ այն, որ լուսժողովմաստի հավանությանը ներկայացվեց համալսարանի Կանոնադրության երկու նախագիծը՝ Կողբետյան-Պիճիկյանի հավանության արժանացած, որը հիմնականում նույնն էր, ինչ և նախկին համալսարանի կանոնադրությունը և երկրորդ՝ իմը, որ համարվեց մասնավոր, իսկ առաջինը՝ որպես հանձնաժողովի: Ընկ. Ա. Հովհաննիսյանը, օգտվելով իր ժողովմական իրավունքից՝ հիմք ընդունեց իմ ներկայացրած նախագիծը՝ իր կողմից [մուծելով] մի քանի կարևոր ուղղումներ ու հավելումներ: Այս վերջին էտապում՝ հանձնաժողովի մյուս երկու անդամները ևս հրաժարվեցին իրենց նախագծից:

Բացի կանոնադրության նախագծից՝ հանձնաժողովը ներկայացրել էր դաշնակցական համալսարանի բոլոր դասախոսների ցուցակը en bloc հաստատելու: Այս հարցում ևս ես հանձնաժողովի մյուս երկու անդամների հետ տարակարծվել էի, ինչ վերաբերում է հին դասախոսների ցուցակն en bloc ներկայացվելուն՝ ես գտնում էի, դա սոսկական փաստական տեղեկանք էր ներկայացվելու, ընկերներս գտնում էին, որ դա դասախոսների պաշտոնական ցուցակ էր հանդիսանալու:

1920թ. դեկտեմբերի 28-ին Լուսժողկոմատը վերջնականապես հաստատեց թե համալսարանի Կանոնադրության վերանշակված նախագիծը և [թե] դասախոսական կազմը:

Բ Երևանի ժողովրդական համալսարանի ժամանակավոր կանոնադրությունը

Կանոնադրության առաջին՝ ծրագրային բնույթ կրող հոդվածը շեշտում է, որ նորաստեղծ «Ժողովրդական համալսարանը» «բանվորագյուղացիական - ազատ դպրոց է», որ «մասսաների սեփականություն է դարձնում բնական և սոցիալական գիտությունները, նրանց ուսումնասիրության մեթոդները, նպաստելով կյանքի գիտակցական վերաշինությանը՝ կոմունիստական աշխարհայացքի հիմունքներով»:

Չակերտների մեջ առած ամբողջ հավելումը հետագային ավելացրեց միանձնյա՝ լուսժողկոմ ը[նկ]. Ա. Հովհաննիսյանը:

Կանոնադրության նախագիծը մշակելիս ի նկատի էինք առել, որ այս համալսարանը միակ բարձրագույն դպրոցն էր, իսկ պետության և ժողովրդի կարիքները բազմազան և մյուս կողմից բանվորագյուղացիական մասսաների կրթական մակարդակը շատ ցածր էր՝ անհրաժեշտ համարեցինք, որ բացի համալսարանի սիստեմատիկ կուրսային դասախոսություններից՝ ի պահանջելն հարկի կազմակերպվեն նաև հատվածական դասախոսություններ, այս վերջին արտահայտության տակ հասկացվում էին մասնագիտական-գործնական կուրսեր, որ առաջին իսկ օրից ես կազմակերպել էի իրավաբանական-արդարադատության ժողովրդական կոմիսարիատին կից և մյուսն էլ Երևանում ու Էջմիածնում՝ կոոպերատիվ կուրսեր՝ Հայկոոպի իրավասության ներքո: Մենք ծրագրում էինք, որ Սովետական Հայաստանի ողջ գիտաուսումնական, գիտահետազոտական և անգամ վարչատնտեսական աշխատողների պատրաստման գործը կենտրոնանա համալսարանում:

Կյանքը շատ շուտով այլ կերպ ընթացավ: Մի կողմից կազմակերպվեցին բազմապիսի մասնագիտական-գործարար աշխատողների վերապատրաստման էպիզոդիկ (հատվածական) դասընթացներ և մյուս կողմից՝ գիտահետազոտական ինստիտուտներ:

Կանոնադրության առաջին՝ ծրագրային հիմնական հոդվածի առաջադրած նպատակի կենսագործման համար՝ Կանոնադրությունը նախատեսում էր գիտաուսումնական աշխատանքի տարբերակներ՝ բացի ընդհանուր ու պարտադիր դասընթացքից՝ նաև շեղում-վարիանտներ գիտաուսումնական, գիտահետազոտական և թե նույնիսկ՝ գիտապոպուլյար: Այդ վարիանտի դասընթացները արդեն ֆակուլտատիվ բնույթ էին կրելու և ոչ ընդհանրական-հարկադիր: Նման վարիանտի կուրսերը կազմակերպվում են ըստ ուսանելու ցանկություն ունեցողների զարգացման աստիճանի:

Աշխատավորության համատարած-մասսայական անգրագիտության թե թերությունն ակատառումով՝ Կանոնադրությունը նախատեսել է նաև ժողովրդական այս լայն զանգվածներին հոգևոր սնունդ մատակարարելու կարևոր գործը:

Կամենալով մատչելի դարձնել համալսարանը մասսաներին՝ Կանոնադրությունը ուսանողների ընդունելության բոլոր արգելակները վերացրել էր:

Կանոնադրության 10-րդ հոդվածի համաձայն «ունկնդիրներն ընդունվում են առանց քննության՝ 16 տ[արին] լրացած քաղաքացիներից», ընդ որում համաձայն նույն հոդվածի ծանոթության՝ «Առաջին հերթին ընդունվում են բանվորներն ու չքավոր գյուղագիները և ապա միայն մյուս քաղաքացիները»:

Ուսումը, իհարկե, ձրի էր:

Կանոնադրոթյան համաձայն համալսարանի ուսումնական կազմը բաժանվում էր երկու կարգի՝ պրոֆեսորների ու դասախոսների: Սակայն առաջին երկուերեք տարին բոլորս էլ կոչվում էինք դասախոսներ, առավել ևս, որ Սովետական Ռուսաստանում ևս աստիճաններն ու կոչումները վերացվել էին: Պրոֆեսորական կոչման պահանջներին կարող էին բավարարել միայն Մանուկ Աբեղյանը և Մավիչ-Չաբլոցկին, մասամբ նաև Թ. Թորոմանյանը:

Դասախոսական պարտադիր ժամաչափը համալսարանում կանոնադրոթյամբ որոշվել էր շաբաթական վեց ժամ, թույլատրելով նաև արտաժամյա՝ սակայն հատուկ վարձատրությամբ:

Համալսարանի կառավարչական սիստեմի հիմունքներն այսպես էին՝

I. Համալսարանի բարձրագույն օրգանը հանդիսանում էր համալսարանի խորհուրդը, որին անդամակցում էին բնագիտական ու հասարակագիտական ֆակուլտետների վարիչները՝ ղեկանները, երեք ներկայացուցիչներ դասախոսներից, հինգ՝ ուսանողներից և մեկական ներկայացուցիչներ՝ ա) կոմպարտիայից, բ) պրոֆմիությունից, գ) լուսժողկոմատից, դ) կրթական հաստատություններից, ե) պրոլետկուլտից:

Համալսարանի խորհրդի իրավասության մեջ են մտնում՝ համալսարանի ամբողջ վարչակազմի ղեկավարությունը, ֆակուլտետների կողմից առաջարկված դասախոսների հաստատումը, բյուջեի հաստատումն ու կատարումը, վարիչի ընտրությունը և այլն:

Լուսավորության ժողովրդական կոմիսարիատի ներկայացուցիչն վերապահվում էր համալսարանի խորհրդի որոշումների նկատմամբ veto-ի իրավունքը, սակայն տարածայնությունների վերջնական լուծման իրավունքը պատկանում էր լուսավորության ժողովրդական կոմիսարին:

Համալսարանի խորհրդում թե բաժանմունքներում խնդիրները լուծվում են բաց ձայնատվությամբ, եթե միայն նիստերին մասնակիցներից քառորդ ու ավելի հոգին չպահանջեն երկրորդ քվեարկություն: Անպայման գաղտնի քվեարկությամբ են կատարվում վարիչի, խորհրդի անդամների և դասախոսների ընտրությունները:

Գ. Համալսարանի անդրանիկ դասախոսական կազմը

Անկախ գիտական-մանկավարժական որակի խնդրից՝ մեծագույն դժվարության առաջ էր կանգնել Սովետական իշխանության քաղաքական նկատառումներով: Թե՛ Կենտկոմն ու Ռ-կոմը և թե՛ լուսժողկոմատը միանգամայն գուրկ էին հնարավորությունից՝ ապահովելու նորաբաց համալսարանը թե ոչ կոմունիստ, գեթ սովետական իշխանությունն ընկալող ղեմնկրատական-սոցիալիստական մասնագետներով: Իրականությունն այնքան անմխիթար էր, որ այդ պահանջն առաջադրելով՝ Սովետական Հայաստանի կառավարությունը պետք է միաժամանակ հրաժարվեր սովետական համալսարան կազմակերպելու մտքից: Իսկ հրաժարվել այդ մտքից կնշանակեր նախ՝ երկար ժամանակ թողնել վաղեմի բուրժուական-նացիոնալիստ մասնագետներին մեր սոցիալիստական շինարարության առաջընթացի գործը և մյուս կողմից ընդհանրապես սահմանափակել սոցիալիստական, հատկապես տնտեսատեխնիկական շինարարության գործը և նրա ծավալն ու տեմպը: Դասախոսական կազմի խորհուրդը շատ մեծ մտահոգություն է պատճառել հատկապես լուսժողկոմատին: Միջանկյալ նշենք, որ անգամ Մոսկվայում, որտեղ հավաքված էին կոմպարտիայի բոլոր որակյալ «մասնագիտական ույժերը», Մոսկվայի համալսարանի համարյա ողջ դասախոսական կազ-

մը լեցուն էր կաղետա-օկոյաբրիստական պրոֆեսորներով-դոցենտներով:

Հանձնաժողովից ներկայացված դասախոսական կազմի խնդիրն ամենայն մանրամասնությամբ քննության է առնվել ընկեր Ա. Հովհաննիսյանի և իմ կողմից, ապա ներկայացվել Կենտկոմ, որի հավանությունը ստանալուց հետո միայն դասախոսական այս անդրանիկ կազմը հատուկ հրամանով հրապարակվեց «Կոմունիստ»-ում և ապա պաշտոնապես վերահրատարակվեց «Դեկրետների և հրամանների ժողովածու»-ի 1921 թ. համարում:

Դասախոսական կազմը հրապարակվեց հրամանով նույն օրը, ինչ և համալսարանի Կանոնադրությունը:

Կազմը հետևյալն էր՝

I. Հասարակագիտական ֆակուլտետի դասախոսներ

1. Մանուկ Աբեղյան – նախկին նոր-դարական. տե՛ս նախընթացում
2. Ադրայան Նիկոլ – գրական քննադատ – հրապարակախոս, դաշնակցական
3. Տերտերյան Արսեն – տե՛ս վերև՝ դաշնակցական համալսարանում
4. Դավիանցյան Գրիգոր – տե՛ս վերև
5. Աբրահամյան Ռուբեն – լեզվաբան, անպարտիական
6. Լիսիցյան Լևոն – դասախոս Հայաստանի պատմական աշխարհագրության, ապա, որդին Ստեփան Լիսիցյանի - երիտասարդ գիտնական, էս-էո, բայց փետրվարյան ուղյուցիայի ժամանակ նահատակվեց դաշնակցական ենիչերիների՝ ձեռքով:

7. Մանանդյան Հակոբ – տե՛ս վերը

8. Մելիք -Ալլահվերդյան Գրիգոր – սոցիալ-դեմոկրատ՝ պրեսական

9. Պիճիկյան Գագիկ – սոցիալ-դեմոկրատ սպեցիֆիկ և ապա՝ կոմունիստ

10. Տիգրանյան Սիրական – դաշնակցական պարլամենտի փոխ-նախագահ,

II Պետական դումայի անդամ, արտաքին գործոց և հանրային կրթության և արվեստի մինիստր. 1937 թ. կալանավորվեց, կենդանի չէ: Դեռ չի քննվել ռեաբիլիտացիայի հարցը:

11. Էդիլյան Գուրգեն – մանկավարժ. անդամ հայ ժողովրդական պարտիայի, բանտարկվել է 1937 թ., կենդանի չէ, ռեաբիլիտացվել է:

12. Թորոմանյան Թորոս – անպարտիական, թեև համակիր Նուբարին:

13. Չուբարյան Գրիգոր – էս-էոական կենտկոմի անդամ, 1937 թ. բանտարկված, ռեաբիլիտացված, սովետական իշխանության ժամանակ վարեց պատասխանատու պետական պաշտոններ ու գիտական հրապարակախոսական աշխատանք:

14. Խոնդկարյան Արշամ – էս-էոական կենտկոմի անդամ, Հայաստանի խորհրդարանի ու պարլամենտի անդամ՝ որպես էս-էո: Փետրվարյան ավանտյուրայից հետո՝ դաշնակցության զինակից, հակասովետական էմիգրանտ. աշխատակցում [էր] դաշնակցական թերթերում, ոչ միայն իր ստորագրությամբ, այլ և Աթան պսևոգնիմով:

II. Բնագիտական ֆակուլտետի դասախոսների անդրանիկ՝ ուկրմական շրջանի կազմից ներկայիս, որքան ինձ հայտնի է՝ պրոֆեսոր-ակադեմիկ Ալեքսանդր Հակոբյանն է, Ավետիք Տեր-Պողոսյանը, Դավիթ Չավրիկը, Ստեփան Դամբարյանը, Մավիչ-Չաբլոցկին վախճանված են բնական մահով: Ստեփան Դամբարյանը 1938թ. բանտարկված է եղել, սակայն ռեաբիլիտացված է: Գ. Գուրգենյանը ձերբակալվել է 1937թ., կենդանի [...], որքան հայտնի է, ռեաբիլիտացված չէ, մարդ էլ չունի, [որ] ռեաբիլիտացիայի հարց հարուցե. որքան հիշում եմ, նա ո՛չ մի քաղաքական պարտիայի չի պատկանել: Է. Կորբետյանի մասին կավելացնեմ, որ 1921թ. լուսժողկոմատը հատուկ հրամանով հեռացրեց համալսարանից և ընդհանրապես պետք է ասեմ, որ նա գուցե լավ մասնագետ է՝ մաթե-

մատիկոս, բայց ընչասեր, արկածախնդիր ու հակասովետական տիպար էր: Օրինական, թե անօրինական ճանապարհով անցել է արտասահման: Կենդանի է, թե ոչ, չգիտեմ:

Տեղեկություն չունեմ մաս Ա. Նալբանդյանի և Ա. Վարդապետյանի մասին:

Քանիցս խնդրել ենք Կենտկոմ, լուսժողկոմատ՝ ուղարկել համալսարան կոմունիստ դասախոսներ, սակայն ունկոմի շրջանում դա մեզ չհաջողվեց:

Փետրվարյան ավանդույտայից 3-4 օր առաջ ևս վերջին անգամ համալսարանի խորհուրդը լուսժողկոմատի առաջ խնդրամատույց եղավ նույն իմաստով: Միայն 1921-1922 ուսումնական տարում՝ համալսարանի խնդրին՝ ուղարկել մեզ դասախոսներ՝ Ս. Լուկաշինին, Ա. Հովհաննիսյանին, Հ. Ազատյանին, Ս. Փիրումյանին, Հ. Գույլիքյովիսյանին, հաջողվեց ստանալ միայն Ա. Հովհաննիսյանին և Հ. Ազատյանին: 1921-1922 թթ. Ա. Խոնդկարյանի փախուստով արտասահման և Լևոն Լիսիցյանի սպանությամբ՝ էս-էո դասախոս մնացի մենակ ես, բայց փոխարենը շատ ուժեղացավ մենչևիկ-պլեխանովական սպեցիֆիկների թիվը՝ Գևորգ Ղարաջյան (Արկոմեդ), Թադևոս Ավդալբեկյան, Տրվանդ Պալյան, Ցոլակ Խանգաղյան, Գագիկ Պիճիկյան, Գրիգոր Մելիք-Ալլահվերդյան, քիչ հետո մաս Արտաշես Ղահրամանյան, Լևոն Միրզա-Ավագյան և այլն:

Դ. Սովեդախայ՝ Երևանի ժողովրդական համալսարանի բացումը

ՀՄՍՌ- ժողովրդական համալսարանի բացումը տեղի ունեցավ 1921 թ. հունվարի 23-ին դաշնակցական մախկին պարլամենտի նիստերի դահլիճում: Պարլամենտի շենքն արդեն կոչվում էր Ստեփան Շահումյանի անվան կենտրոնական բանվորական ակումբ: Օրը կիրակի էր, ժամը կեսօրի պահին: Բեմի վրա տեղավորվեցին լուսժողկոմն իր պատասխանատու պաշտոնյաներով, Կենտկոմի ներկայացուցիչները, արհմիության կազմբյուրոն՝ ղեկ. Հայկ Ազատյանի գլխավորությամբ, Կարմիր բանակի քաղբաժնի աշխատակիցները և համալսարանի դասախոսները:

Հանդեսի սկզբին հոտնկայս երգվեց Ինտերնացիոնալը: Համալսարանի ժամանակավոր վարիչ Հակոբ Մանանդյանի բացման համառոտ խոսքից հետո Արմուկունի կողմից ողջույնի և միաժամանակ ղեկավարատիվ ելույթ ունեցավ լուսժողկոմ ընկ. Ա. Հովհաննիսյանը՝ ընդգծելով իր ճառում, որ «գիտությունը պետք է հանդիսանա կյանքի և աշխատանքի կազմակերպիչ գործոններից մեկը և այսուհետև նա պետք է գտնվի բանվորության ձեռքում և տոգորվի նրա շահերով ու իր դեպքերով: Նոր համալսարանը պետք է ազատագրվի կղերականության և բուրժուականության հոգևոր կապանքներից և ավանդություններից և նոր ուղի բռնի մաս կիտական աշխարհայացքի մշակման գործում, համակերպվելով այն հեղաշրջմանը, որ տեղի է ունեցել հասարակական-տնտեսական բովանդակ կառուցվածքի մեջ»:

Ողջույնի ջերմագին ճառերով հանդես եկան – ՀԿՊ Կենտկոմի կողմից Վահան Երեմյանը, արհմիության կազմբյուրոյի անունից՝ Հայկ Ազատյանը: Կարմիր բանակի քաղբաժնի կողմից՝ Ալեքսանդր Լալայանը:

Համաձայն ակադեմիական տրադիցիայի և դիրեկտիվ հիմնարկների որոշման՝ ողջույնի հանդիսավոր ճառերից հետո պետք է անդրանիկ դասախոսությունը կարդացվեր, որով պաշտոնապես և ի լուր ու ի տես ներկա եղող հասարակության հայտնագրվում էր, որ համալսարանը արդեն սկսել է իր գիտական- ուսումնական կյանքը:

՝ «Կոմունիստ», 1921 թ., հունվարի 26, № 39, չորեքշաբթի:

Ինձ էր վիճակվել այդ պատվավոր հանձնարարությունը: Ես դասախոսության նյութ ընտրեցի «Խորհրդային իրավունքը և Հայաստանի ժողովրդական համալսարանը»: Դ-ահիլճը մեծ էր, վառելափայտ շունեինք տաքացնելու, ցուրտը մի փոքր մեղմացրել [էր] ներկա եղող ունկնդիր բազմության շունչը: Ես մի խորհրդավոր գուգադիպությամբ նստած էի դաշնակցական Հայաստանի կրթության և արվեստի երբեմնի մինիստր Նիկոլ Աղբալյանի կողքին: Երբ քայլերս ուղղեցի դեպի առաջ, հիշեցի Աղբալյանի ողջույն-դիրեկտիվ ճառը դաշնակցական համալսարանի հանդիսավոր բացման ժամին և այդ իսկ պահին Մեսրոպ եպիսկոպոսի ակադեմիական անդրանիկ ճառը՝ Հայ վանքերի արժեքավորման նվիրյալ, ուստի և մի կամայական պահանջ զգացի պատասխանել նրանց՝ առանց անուճեքը հիշատակելու, բայց հակադրվելով նրանց, միաժամանակ օգտագործելով նրանց ֆրազեոլոգիան:

«Այն ջահը, որ մենք վառում ենք այսօր Հայաստանի բարձրավանդակի վրա՝ չի հանգչի երբեք, այդ ջահը կոչումն ունի ոչ միայն լուսավորություն պարգևելու, այլև ջերմություն ներշնչելու ժողովրդներին հոգուն ու սրտին ոչ միայն առաջավոր Ասիայում, այլ և ամբողջ աշխարհում: Եվ մեր այդ հավիտենական անշեջ ջահը ճառագել էր ոչ թե Արևմուտքի վերջալույսից, այլ Արևելքի արշալույսից: Մեր պայքարի հաղթանակի երթին և ստեղծագործ աշխատանքի հրաշակերտությանը չեն ձայնակցի երբեք հայ մենաստանների ու տաճարների զանգերի մելամաղձիկ-լձակաճ ղողանջները...»:

Երբ դեռ չէի ավարտել իմ դասախոսությունը, պրոլետարիատի դիկտատուրայի և ուղյուցիոն բռնության արդարացման՝ ինչ որ աներևույթ ձեռք գրություն ձգեց ինձ: Առանց դադարի շարունակեցի դասախոսությունը և միաժամանակ կարդացի գրությունը. ցասկոտ էր գրությունը՝ «Միրո, երբայության, համերաշխության ենք կարոտ, իսկ դուք շուրջ մի ժամ է, ինչ բռնությունն եք օրհներգում: Մենք բողոքում ենք, որ դուք մրտտելու եք միտքն ու խիղճը մեր դժբախտ երիտասարդության ձեր արյունոռչտ կոչերով և ուղյուցիոն բռնության քարոզներով»:

Ես աշխատեցի զսպել ինձ և ոչնչով զգալ չտալ ունկնդիրներին, սակայն առանց ակնարկելու ստացածս գրության նկատմամբ, միջանկյալ հարակցեցի. «Մեր երկրում թեև քիչ են չարագործները, բայց դեռ շա՛տ-շատ են այն միամիտները, որոնք փորձում են հավաստիացնել, որ պարահանդեսի սպիտակ ձեռնոցներով է լուծվում աշխատանքի ու կապիտալի ճակատագրական-օրհասական պայքարը: Մենք հանցագործ կլինեինք Հայաստանի բանվորի և աշխատավոր գյուղացու առաջ, եթե նրա հարազատ զավակների հոգում սոցիալական համերաշխության քարոզներով քաղաքական պատրանքներ պատվաստեինք»:

Դասախոսությունից հետո կրկին հնչեց Ինտերնացիոնալի մարտաշունչ հիմնը, որից հետո համալսարան[ի] հանդիսավոր բացման հանդեսը ավարտվեց:

Դաշնակցական համալսարանի բացման աշխարհիս տերերն ու մեր երկրի մեծերն էին խրախուսում՝ սովետահայ համալսարանի հանդիսավոր բացմանը՝ բանվորական ակումբի ընդարձակ դահլիճը լի էր բանվոր-ծառայողական բազմությամբ: Դաշնակցական համալսարանի բացումը նվիրագործել էր անգամ Մեծն Բրիտանիոն արտաքին գործոց մինիստր և աշխարհիս հնագույն Օքսֆորդի ու Էքսթերիջի համալսարանների կանցլեր լորդ Ջոն Նաթանիել Կերզոն, իսկ մեր համալսարանի հանդիսավոր բացումը ողջունում էր աշխատավորը, կոմունիստը, կարմիր բանակայինը, պրոֆմիությունը... Արևմուտք[ը]՝ հայ ժողովրդի վերջալույսն էր, իսկ Արևելքը՝ հայ ժողովրդի փրկության արշալույսն էր...

Երկու համալսարաններ՝ երկու հանդիսավոր բացում- մեկը՝ մահաբեր գուժական, մյուսը՝ կենսատու ավետաբեր:

Ե Համալսարանի աշխատանքների պայմանները ավելի քան ծանր էին: Համալսարանի շենքը դեռ գրադված էր ոչ միայն վիրաբուժելի հիվանդներով, այլ և տարափոխիկ հիվանդներով: Դասախոսները բնակարան չուներին, ուսանողները՝ որևէ հանրակացարան՝ զլուխ դնելու: Չկային ոչ միայն ուսանողների համար ձեռնարկներ, այլ և դասախոսները գուրկ էին գրադարաններից ու գրքերից, վառելիք իսկ չկար, սոված էին թե՛ ուսանողները և թե՛ նաև դասախոսները:

Ո՛չ միայն դասախոսներից շատերը դեռ օտար, նույնիսկ դիմադիր էին սովետական իշխանության, այլև ուսանողությունը իր մասսայական տրամադրությամբ դեռևս ամբողջովին սովետական չէր, շատերն անգամ ակնհայտ հակասովետական տրամադրություններ էին արտահայտում: Շատ չանցած, առանձնապես մենչևիկ-սպեցիֆիկներից մերագլվելով՝ երիտասարդ ուսանողության որոշ խմբակներ տարվեցին-խաբվեցին իրենց ուսուցիչների քարոզներից և անգամ նախաձեռնեցին հակասովետական ընդհատակյա կազմակերպություններ:

Սակայն շատ չանցած կոմպարտիայի-կոմսոմոլի նախաձեռնությամբ ծայր առավ համալսարանի ուսանողության մեջ ակտիվ պարտիական աշխատանք, պայքար ընդդեմ օտար ու թշնամի իդեոլոգիաների ու տրամադրությունների: Վաճառականների, տերտերների, կուլակների, չինովիկների զավակները շատ շուտով նոսրացան. գյուղերից, գործարաններից, որբանոցներից եկավ սոցիալական ու բարոյագգացման նոր, սովետական ուսանող սերունդ: Ով-ումի պայքարը ստացավ իր վերջնական արդար և օրինական լուծումը: Տճև-ամմարմին ուսանողությունը քայլ առ քայլ դարձավ պոռոտարական ուսանողություն...

Նրանք նոր շունչ, նոր ոգի ներարկեցին ողջ ուսանողության մեջ, որով իսպառ վերացավ հին աշխարհի տարամերժ մնացուկների վնասակար ազդեցությունը:

Եղիշե Զարենց, Նաիրի Զարյան, Գուրգեն Մահարի, Նորայր Դաբաղյան, Բաֆիկ Աթայան, Եզրաս Հասրաթյան և ամբողջ անվերջ շարան մի ուսանողություն, որ նոր հոգի, նոր շունչ տվեց համալսարանին, որը դարձավ մեծագույն գիտական իդեոլոգիական դարբնոցը, որտեղ կառուցվեցին ու կոփվեցին այն սերունդները, որոնք սքանչելագարեցին ու փառակերտեցին ի փառս Հայրենիքի և ի փրկություն ժողովրդի:

Աշխատանքի թե պայքարի ոլորտներում ու ճակատներում համալսարանի ուսանող սերունդները փառավոր հերոսական էջեր հրաշագործեցին:

Շա՛տ տարիներ են անցել այն օրերից, երբ մենք անօրինակ դժվարին պայմաններում հիմք էինք դնում և պատերը շարում գիտության այդ նվիրական կաճառի:

Շատ քչերը, թերևս ոչ ոք, կարող էին պատկեր[ացն]ել տնտեսական, գիտական, կուլտուրական հաղթանակների այն բարձունքները, որոնք նվաճված ու ամրապնդված են արդեն...

Հայ Հայրենիքի և հայ ժողովրդի պայքարի ու ստեղծագործության սքանչելագործության մեջ իր ազնիվ, պատվավոր և փառավոր ներդրումն է կատարել Հայաստանի պետական համալսարանի պանծալի ուսանողությունը:

Ա. Գ. МАДОЯН - Неизданная статья Григора Чубаряна об истории университета. - Известный общественный деятель, правовед, историк и публицист Григор Чубарян (1888 - 1962) оставил заметный след в истории Ереванского государственного университета. Он принял активное участие в реорганизации университета, был одним из первых его лекторов, с перерывами (1921 - 1937, 1957 - 1962) преподавал римское право, государственное право, советскую Конституцию, риторику и другие дисциплины. Публикуемая статья обращена к периоду реорганизации университета и важна как свидетельство непосредственного участника событий.